

2020

«Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական
ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց»
ՀՀ ք. Գյումրի, Մ. Խորենացու փողոց 50/5, 50/6, 50/7

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ /լրամշակված/

ԿԱՏԱՐՈՂ
Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
« ՍԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ » ՍՊԸ

Ա/Ձ Ա. Գալոյան
ք. Երևան Սևանի 5
Հեռ. բջջ. +374 99 994222
galoyan.aram@gmail.com

ՀՀ



«Արթուր Ալեքսանյանի անվան հունահռոմեական ըմբշամարտի
մանկապատանեկան մարզադպրոց»
ՀՀ ք. Գյումրի, Մ. Խորենացու փողոց 50/5, 50/6, 50/7

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՑ /լրամշակված/

«ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՄՊԸ տնօրեն

Լ. Լևոնյան

Ա/Ձ Ա. ԳԱԼՈՅԱՆ

Երևան 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.3	Հապավումներ	4
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	5
1.5.1	<i>Ներկա վիճակի նկարագիր</i>	5
1.5.2	<i>Նախատեսվող գործունեության նկարագիր</i>	6
1.5.3	<i>Արտաքին բարեկարգում</i>	9
1.6	Թափոնների կառավարում	10
1.7	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	10
1.8	Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ	13
1.9	Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ	16
1.10	Նյութերի և բնարեսուրսների օգտագործում	16
1.11	Արտաքին ցանցեր.....	17
1.11.1	<i>Էլ. մատակարարում</i>	18
1.11.2	<i>Քազամատակարարում</i>	18
1.11.3	<i>Կանաչապատման աշխատանքներ</i>	18
1.11.3.1	<i>Կանաչ տարածքի ոռոգում</i>	19
2.	ՆԱԽՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	20
2.1	Ընդհանուր տեղեկություններ	20
2.2	Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը	22
2.3	Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների ընդհանրացված ցուցանիշները	24
2.4	Ինժեներա երկրաբանականեզրակացություն	24
2.5	Օդային ավազան	26
2.6	Հիդրոլոգիա	30
2.7	Սելսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ	30
2.8	Հողերի նկարագիրը	31
	Ստորև Նկար 4-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի հողերի կատեգորիանը	32
2.9	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը.....	32
2.10	Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը	35
2.11	Պատմամշակութային և բնության հուշարձանները	37
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԳԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	39
3.1	Ռիսկերի գնահատում	39
3.2	Արտանետումների աղբյուրները	40
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	40
3.3.1	<i>Մթնոլորտային օդ</i>	40
3.3.2	<i>Ջրային ռեսուրսներ</i>	40
3.3.3	<i>Հողային ռեսուրսներ</i>	41
3.3.4	<i>Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը</i>	41
3.3.5	<i>Աղմուկ և թրթռում</i>	42
3.3.6	<i>Թափոնների կառավարում</i>	43
3.3.7	<i>Տարածքի բարեկարգում կանաչապատում</i>	43
3.3.8	<i>Կենսաբազմազանություն և էկոհամակարգեր</i>	44

4. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	45
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	46
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	50
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	52
ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	53

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ **Գյումրու քաղաքային համայնք**

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ **ՀՀ ք. Գյումրի, Վարդանանց հր. 1**

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ **ՀՀ ք. Գյումրի, Մ. Խոբենացու փողոց 50/5, 50/6, 50/7**

1.6 Հեռախոս՝ **+374 312 3-2606**

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝ **«ՄԱՐԳԻՍ ԵՎ ՄԱՐԻԱՆՆԱ» ՍՊԸ**

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է կառուցել ժամակակից ըմբռամարտի մանկապատանեկան մարզադպրոց: Մարզադպրոց կառուցման նախագիծը նախատեսվում է իրականացնել ք. Գյումրի, Մ. Խորենացու փողոց 50/5, 50/6, 50/7 հասցեներում:

Մարզադպրոցի կառուցման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Մարզադպրոցի կառուցման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնատեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Ներկա վիճակի նկարագիր

Կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ք. Գյումրի, Մ. Խորենացու փողոց 50/5, 50/6, 50/7 հասցեներում:

Հողատարածքը գտնվում է բնակելի և հասարակական շենքերի հարևանությամբ: Տեղանքը հարթ է, քարքարոտ, զուրկ է բուսականությունից: Երկրաբանական տեսակետից տարածքը բարենպաստ է կառուցապատման համար:

Հողատարածքը բաղկացած է 3 հողակտորից, ընդհանուր մակերեսը կազմում է 9.9595 հա: Տարածքը կառուցապատված չէ:

Հողամասի բնութագրերը՝

- Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
- Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման

1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր

Ներկայացված նախագիծը կատարված է համաձայն 09.04.2020թ. ք. Գյումրիի քաղաքպետի կողմից հաստատված N62 ճարտարապետահատակագծային առաջադրանքի և գործող ՀՀ քաղաքաշինական նորմերի և կանոնների:

Մարզադպրոցը բաղկացած է 3 հիմնական կառուցներից՝

- Հյուրանոց
- Մպորտային մասնաշենք
- Մարզադաշտ և տրիբունա
- Կաթսայատուն
- Ենթակայան

Հյուրանոց

Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի հյուրանոցային մասնաշենքը բաղկացած է չորս մասնաշենքերից:

Շինության մեջ տեղադրված են՝

- Ճաշարանային կորպուս, բաղկացած ընդհանուր սրահից՝ 144 նստելատեղով, սանհանգույցներից՝ տղամարդկանց և կանանց, և խոհանոցային հատվածից
- Ժամանցային սրահ, բաղկացած տարբեր ֆունկցիոնալության սենյակներից / բիլիարդի սրահ, սեղանի թենիսի սրահ, համակարգչային խաղերի սրահ, սեղանի խաղերի սրահ, ինչպես նաև սրճարանից և շոգեբաղնիքից:
- հյուրանոցային մասնաշենքից, որը իրենից ներկայացնում է 3 ամբողջական հարկով և մեկ կիսատ հարկով շինություն: Հյուրանոցային մասնաշենքում տեղակայված են ընդհանուր 109 տարբեր չափսերի համարներ՝ 35 ական առաջինից մինչև երրորդ հարկերում, և 4 լյուկս համար չորրորդ հարկում
- Հարկերում նախագծված են մեկական աստիճանավանդակներ աջ և ձախ թևերում, ինչպես նաև մեկական սանհանգույց տղամարդկանց և կանանց համար նախատեսված

Արտաքին հարդարում

Շինության առաջին և չորրորդ մասնաշենքերի հատվածամասերը ուղղանկյունաձև են +4.000 մ բարձրությամբ հատակի նիշից, իսկ հյուրանոցային մասնաշենքը Դ-աձև շինություն է, անկյուններում կորացումներով +13.600 նիշում հատակից հաշված: Շինության հիմնական հարդարումը իրականացվում է 2 քարերի /սպիտակ չեղկված տրավերտին և սև տուֆ/ համադրման միջոցով, որոնք ցույց են տրված ճակատներում, իսկ որմնախարիսխը երեսպատված է բազալտե սալերով:

Շինության մուտքային ճակատին նախագծված է ապակե հովհար 3.5x3.5 մ թռիչքով մետաղաձուլանային կոնստրուկցիաներին հենված:

Մուտքային մասնաշենքի դիմային ճակատը հիմնականում լուծված է այլումինե պրոֆիլներով վիտրաժներով, իսկ մնացած հատվածներում այլումինե պատուհաններ:

Համահարթեցման նիշից առավելագույն բարձրությունը կազմում է 15,1 մ:

Հյուրանոցի մակերեսներն են՝

Հողատարածքի մակերես 9.9595 հա

Կառուցապատման մակերես 3330 քմ

Հյուրանոցային մասնաշենքի ընդհանուր մակերես 7194 քմ

Հյուրանոցային մասնաշենքի հատակների մաքուր մակերես 6332.7 քմ

Սպորտային մասնաշենք

Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի սպորտային մասնաշենքը բաղկացած է ութ զոնաներից:

Շինության մեջ տեղադրված են՝

- Մուտքային հատված բաղկացած ֆոեյից, հանդիսատեսին սպասարկող սանհանգույցներից տղամարդկանց և կանանց սպասարկելու համար, որոնցում նախատեսված է նաև մեկական հաշմանդամություն և սակավաշարժություն ունեցող անձանց համար առանձին հատված

- Մրցումային սրահ՝ 1044 նստելատեղով, 2 հանդերձարաններից, յուրաքանչյուրում 15 ակն մարզիկ ընդունելու կարողությամբ:

- Միջանցիկ հատված, որը կապում տարբեր ֆունկցիոնալ հատվածները միմյանց

- Ծանրամարտի սրահ բաղկացած 8 ծանրամարտի հարթակներից, պահեստային տարածքից, և հանդերձարաններից, նախատեսված 25 մարզիկի համար

- Մարմնամարզության սրահ 300 մ² բաղկացած պահեստային տարածքից, և հանդերձարաններից, նախատեսված 25

- Մերսան գոնա, բաղկացած մերսան սենյակից, շոգեբաղնիքից, և հանդերձարաններից

- Ըմբշամարտի դահլիճ 1220 մ² 30 մ թռիչքով 6 գորգ տեղավորելու հնարավորությամբ, պահեստային հատվածներով և 2 հանդերձարան նախատեսված 20 ական մարզիկների համար

- Վարչական մաս, որը գտնվում է երկրորդ հարկում

Արտաքին հարդարում

Շինության հատվածամասերը ուղղանկյունաձև են տարբեր բարձրություններով շինության հիմնական հարդարումը իրականացվում է 2 քարերի /սպիտակ չիղկված տրավերտին և սև տուֆ/ համադրման միջոցով, որոնք ցույց են տրված ճակատներում, իսկ որմնախարիսխը երեսպատված է բազալտե սալերով:

Շինության մուտքային ճակատին նախագծված է ապակե հովհար 18x18 մ թռիչքով մետաղաձուպանային կոնստրուկցիաներին հենված, որը վեր է խոյանում 4 սյուներից:

Մուտքային մասնաշենքի դիմային հատվածը հիմնականում լուծված է ալյումինե պրոֆիլներով վիտրաժներով, իսկ մնացած հատվածներում ալյումինե պատուհաններ:

Համահարթեցման նիշից առավելագույն բարձրությունը կազմում է 15,7 մ:

Սպորտային մասնաշենքի մակերեսներն են՝

Հողատարածքի մակերես 9.9595 հա

Կառուցապատման մակերես 5375 քմ

Սպորտային մասնաշենքի ընդհանուր մակերես 6067 քմ

Սպորտային մասնաշենքի հատակների մաքուր մակերես 5742.7 քմ

Մարզադաշտ և տրիբունա

Արթուր Ալեքսանյանի անվան հունա-հռոմեական ըմբշամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մարզադաշտը և տրիբունան նախագծվել են համաձայն ՀՀ ում գործող շին նորմերի և կանոնների:

Մարզադաշտն իրենից ներկայացնում է 105x68 մ գծանշման չափսերով ֆուտբոլի դաշտ, պարփակված 9 գծից բաղկացած վազքուղով:

Դաշտի հատակը իրականացված է խոտածածկով, ինճպես ցույց է տրված նախագծում:

Վազքուղին իրենից ներկայացնում է օվալաձև ռետինե հատակով տարածք, որի տակ իրականացված է նաև ե/բետոնե նախաշերտ:

Տրիբունան իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև կառույց միջանցիկ հակասեյսմիկ կարանով անջատված, շինության ընդհանուր չափսերն են 84,9x9 մ: Կիսանկուղային հարկում նախատեսված են հանդերձարաններ , նախավարժանքի սենյակներ, լոգարաններ և

ադմինիստրացիայի համար նախատեսված սենյակներ, իսկ վերնի զոնայում տեղակայված են նստարանները, թվով 1100 հատ:

Արտաքին հարդարում

Շինության հատվածամասերը ուղղանկյունաձև են, տարբեր բարձրություններով, շինության հիմնական հարդարումը իրականացված է 2 քարերի /սպիտակ չհղկված տրավերտին և սև տուֆ/ համադրման միջոցով, որոնք ցույց են տրված ճակատներում, իսկ որմնախարիսխը երեսպատված է բազալտե սալերով:

Տրիբունայի ծածկը մետաղական ֆերմաներով կոնստրուկցիաներ են:

Համահարթեցման նիշից առավելագույն բարձրությունը կազմում է 10,10 մ:

Սպորտային մասնաշենքի մակերեսներն են.

Հողատարածքի մակերես 9.9595 հա

Կառուցապատման մակերես 15876.5 քմ

Տրիբունայի ընդհանուր մակերես՝ 725.5 քմ

Կաթսայատուն

Շինությունը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև շինություն 14.80x7.8 մ չափսերով

1 հարկանի, տանիքը միաթեք, արտաքինից երեսպատված տրավերտինե սալերով, ներքին պատերը ներկված են յուղաներկով:

Կաթսայատունը կահավորվելու է 2 հատ ավտոմատացված ECOMAX Q=426 կՎտ հզորությամբ ջերմային կաթսաներով:

Ենթակայան

Շինությունը իրենից ներկայացնում է ուղղանկյունաձև շինություն 7.60x6.0 մ չափսերով

1 հարկանի, տանիքը միաթեք, արտաքինից երեսպատված տրավերտինե սալերով, ներքին պատերը ներկված են յուղաներկով:

1.5.3 Արտաքին բարեկարգում

Ճարտարապետա-հատակագծային լուծումներ

Արտաքին մակերեսները նախատեսվում է իրականացնել ասֆալտոբետոնե շերտ ծածկույթով, տոմետե 5սմ սալերով, իսկ մնացած հատվածները կանաչապատել: Կանաչապատ տարածքները ասֆալտոբետոնե շերտերից սահմանազատվում են բազալտե եզրաքարերով 150x300 մմ չափսերի:

Տարածքի ամբողջ պարագծով նախատեսվում է իրականացնել ցանկապատ, որի առաջին 1 մ քարից՝ երեսպատված բազալտե սալերով, մնացած 1,5 մ հատվածը մետաղական խողովակներից կազմված ճաղավանդակով:

Ընդհանուր ցուցանիշներ

ԳԳ	ԱՆՎԱՆՈՒՄ	Չափ. միավ.	ՄԱԿԵՐԵՍ
1	Բետոնե սալիկ / տոմետ/	մ ²	6701
2	Կանաչ տարածք	մ ²	39560
3	Ասֆալտապատում	մ ²	25320
4	Բազալտե եզրաքար150x300մմ	գծ/ մ	6282
5	Ցանկապատ Մետաղական	գծ/ մ	1667
6	Խաղային կորտերի ցանկապատ	գծ/ մ	432
7	Խաղային կորտերի ռետինե հատակ	մ ²	2700

1.6 Թափոնների կառավարում

Գյումրի քաղաքի տարածքում աղբահանության նպատակով բնակելի թաղամասերում տեղադրված են աղբահավաք տարողություններ և աղբարկղներ: Աղբահեռացումը կատարվում է կանոնավոր: Թաղամասերի առանձին տեղերում աղբը թափվում է չնախատեսված վայրերում, ինչը հանգեցնում է տարածքի սանիտարական վիճակի վատթարացմանը: Մակայն դրանց քանակը մեծ չէ և գնալով ավելի է նվազում:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 1200-1300 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 3956մ³ շինարարական աղբը: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Մանկապատանեկան մարզադպրոցի շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

1.7 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Որպես շինհրապարակ դիտարկվելու է ամբողջ հողատարածքը:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները¹:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ գերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^ա բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի« աշխատանքների ընդհանրացված փուլի» կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների« աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ« կոշիկ)« համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում« լուսավորում« օդափոխում« պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)« սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով^ա գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

3©Աշխատանքի պաշտպանության^ա անվտանգության տեխնիկայի« արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում


^{1 1} ՀՀՇՆ Լ-3.01.01-2008 §Շինարարական արտադրության կազմակերպման աշխատանքների կատարում:

պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման« հրահանգման ժամանակին և որակով անցկացման« անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման« արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

1.8 Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ



Գլխավոր հատակագիծ Մ 1:1000
 Генплан М 1:1000

ՊՐՈՋԵԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ
ՎՈՒՄ	Ս. ՄԱՐԿԱՆԻ	Ս. ՄԱՐԿԱՆԻ	Ս. ՄԱՐԿԱՆԻ	Ս. ՄԱՐԿԱՆԻ
ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ
ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ
ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ	ՎԵՐԱԿՈՆՏՐԱԿՏԱՆԻ ԿՈՄՓԼԵԿՍԻ

1.9 Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ

Մանկապատանեկան մարզադպրոցի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է ք. Գյումրի, Մ. Խորենացու փողոց 50/5, 50/6, 50/7 հասցեներում:

Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 9.9595հա:

Շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 30 ամսում:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 70 մարդ, որից

- Ինժեներատեխնիկական անձնակազմ – 4 մարդ
- Բանվորներ - 56 մարդ
- Մեքենավարներ և օգնականներ -10 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- Բետոնախառնիչ 12 մ3՝ 3 հատ
- Բետոնախառնիչ 5 մ3՝ 1 հատ
- Ավտոկրունկ ZOOMLION 25 մ 30տ՝ 2 հատ
- Ավտոկրունկ ZOOMLION 50 մ 50տ՝ 1 հատ
- Ավտոգրեյդեր՝ 1 հատ
- Ավտոզլղոն 7,5 տ՝ 2 հատ
- Ավտոզլղոն 12 տ՝ 1 հատ
- Ավտոինքնաթափ 10խմ՝ 10 հատ
- Ավտոինքնաթափ 20խմ՝ 5 հատ
- Էկսկավատոր 1խմ կովզ՝ 3 հատ
- Էկսկավատոր 0,6 խմ կովզ՝ 3հատ
- մանր տեխնիկա /bobcat/՝ 5 հատ
- Բեռնափոխադրիչ մեքենա կողավոր 20 տ՝ 5 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 68000մ³

Հետլիցք՝ 33000մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Գյումրիի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

1.10 Նյութերի և բնարեսուրսների օգտագործում

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը կպահեստավորվի շինհրապարակում, հատուկ նախատեսված վայրում, ծածկի տակ :

Բետոնախառնուրդի առաքումը նպատակահարմար է ՇԵ-69Ե ավտոբետոնախառնիչով՝ վերամբարձի, ավտոբետոնապոմպի կամ ստացիոնար բետոնապոմպի միջոցով: Բետոնախառնուրդի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma,i} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N– ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n₁– սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 70 մարդ

N₁ – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 780օր

$$W_{\Sigma,i} = (4 \times 0.016 + 70 \times 0.025) \times 780 = 1414.92 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 1.814 \text{ մ}^3/\text{օր:}$$

բ) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S₁ – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K₁ – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

$$U_1 = 500 \times 0.0015 \times 450 = 337.5 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.75 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1752.42 մ³/շին. ժամ:

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն տեխնիկական պայմանի: Կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Բանվորկան և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավաչտից հետո կապամոնտաժվեն :

1.11 Արտաքին ցանցեր

Մարզադպրոցի ջրամատակարարումը և ջրահեռացում կիրականացվի Վեոլիա Ջուր ՓԲԸ կողմից տրվող տեխնիկական պայմանի, որի համար ընկերությունը արդեն իսկ դիմել է Վեոլիա Ջուր ՓԲԸ-ին:

Սառը ջրի սնուցումը կատարվում է Գյումրի սպորտ-համալիրի տարացքում նախատեսող Ø200 ջրագծից, Ø150մմ խողովակով:

Միացո՞ւմը իրականացնել տեղում փաստացի իրավիչակից էլնելով միացման կետում նախատեսել փականային հոր $\varnothing 1500$ մմ, որում $\varnothing 150$ մմ սողնակ կցաշուրթով: Խմելու տնտեսական և հակահրդեհային ջրամատակարարման ցանցերը նախատեսված են համակցված: Հյուրանոցի 4.50 նիշի տանիքում նախատեսված չիլերներին իրականացված է ջրի մոտեցումներ $\varnothing 89$ և $\varnothing 63$ խողովակներով և համապատասխան փականներով:

Ցանցերի համար նախատեսված են պոլիպրոպիլենե խողովակներ $\varnothing 40-15$ մմ և պողպատե $\varnothing 50-159$ մմ:

Թաղման միջին խորությունը հողի նիշից ընդունել 1.60մ ավազի նախապատրաստական շերտով:

Տաք ջրամատակարարումը նախատեսված է գյումրի սպորտ-համալիրի բակում նոր կառուցող անհատական կաթսայատնից $\varnothing 108$ և $\varnothing 80$ տաք ջրի շրջապտույտի խողովակով: Կենցաղային կեղտաջրերը սան-սարքերից ինքնահոս հավաքվում և հեռացվում է ներքին ցանցի միջոցով դեպի կոյուղու Գյումրի սպորտ-համալիրի $\varnothing 200$ մմ բակային ցանցին $\varnothing 150$ խողովակներով 20 տեղամասով: 4.50 նիշի տանիքում նախատեսված չիլերներից նախատեսված է ջրահեռացում, միացնելով տանիքում կոյուղու ցանցերին:

Ցանցերի համար նախատեսված են կոյուղու պլաստմասե խողովակներ $\varnothing 160 +50$ մմ: Նախագծային աշխատանքները կատարված են ՀՀ-ում գորցող նորմերի և կանոնների համաձայն:

Հարթ տանիքից $\varnothing 150$ մմ ջրընդունիչներով անձրեվաջրերը հավաքելով արտաքին պատի վրայով իջեցվում է 1-ին հարկ և հեռացվում է ազատ մակերերվույթի վրա: Ջրընդունիչներում և անձրեվաջրերի հեռացման խողովակների մեջ նախատեսել էլեկտրագալարներ: Խողովակները ամրացնել պատի վրա նորմատիվ հեռավորություններով:

1.11.1 Էլ. մատակարարում

Մարզադպրոցի էլեկտրամատակարարման համար ընկերությունը կղիմի <<ՀԵՑ>> ՓԲԸ-ին: Տեխնիկական պայմաններ ստանալուց հետո, էլ. մատակարարման իրականացման համար, կառուցապատողը պետք է դիմի «ՀԵՑ» ՓԲԸ տարածքային համակարգման տնօրինություն՝ համաձայն ԷՍՕԿ-ի 13.2 կետի պահանջների՝ էլ. Ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:

1.11.2 Գազամատակարարում

Մանկապատանեկան մարզադպրոցի գազամատակարարումը համաձայն 02.03.2020թ. ՆՍՍՈ1.12/35 գրության տրված Շիրակի մարզի ԳԳՄ-ի կողմից հնարավոր կլինի իրականացնել Մուշ 2 թաղամասը սնող d=219մմ միջին ճնշման ստորգետնյա գազատարից:

1.11.3 Կանաչապատման աշխատանքներ

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, մասնատրապես կանաչապատման համար կօգտագործվի՝

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ, նաև նախատեսված են ռետինե խողովակներ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

1.11.3.1 Կանաչ տարածքի ոռոգում

Կանաչապատ տարածքի 1 մ²-ի մեկ ոռոգման համար ջրի ծախսի նորման կազմում է 4-6 լ/մ²:

գազոնների ոռոգում՝ $n_6 = 0.006$ մ³/մ²

Ոռոգման համար ջրապահանջը որոշվում է՝

$$W_{u.3} = (n_6 \times S) \times K \times t$$

որտեղ՝ S – ոռոգվող տարածքի մակերեսն է, գազոնների մակերեսը՝ $S_1 = 39560$ մ²,

K – ոռոգման օրական հաճախականությունն է, $K = 2$

t - ոռոգման օրերի պլանավորված թվաքանակն է, $t = 175$ օր

$$W_{u.3} = (0.006 \times 39560) \times 2 \times 175 = \mathbf{83076}$$
 մ³/տարի

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 Ընդհանուր տեղեկություններ

Լեռնագրական տեսակետից տարածքը տեղադրված է Արագած լեռան հյուսիսարևմտյան լեռնաբազկի վրա և իրենից ներկայացնում է հարթաավազային տուֆային հարթավայր: Հետազոտվող տարածքը գտնվում է Շիրակի մարզ, Գյումրի համայնք Խորենացու փ. 50/5 հասցեում նախագծվող մարզադպրոցի տարածքը իրենից ներկայացնում է չկառուցապատված տարածք:

Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքը տեղադրված է էրոզիոնահողմնահարման սարավանդի սահմաններում: Ռելիեֆը մանր բլրային է, առանձին դեպքերում հարթ, աննշան թեքությամբ դեպի հյուսիս-հյուսիս-արևելք: Տարածքի ռելիեֆի բացարձակ նիշերը տատանվում են 1580,0-1586,0 մետրերի սահմաններում:

Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են չորրորդականի հասակի հրաբխային տուֆերը, բազալտները, անդեզիտաբազալտները և դացիտային լավաները, ծածկված ժամանակակից ալյուվիալ, էյուվիալ-դեյուվիալ, դեյուվիալ-պրոյուվիալ և էյուվիալ առաջացումներով՝ ավազային, կավային և խոշորաբեկորային գրունտներով:

Մեր հետազոտվող տարածքում առկա են տուֆերը առանձին խորություններում ավազակավերի հաստ ենթաշերտերով, որոնց ծածկում են էյուվիալ-դեյուվիալ և տեխնածին առաջացումները:

Կլիման ուսումնասիրվող տարածքի կլիմայական պայմանները բնութագրելիս վկայակոչել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը և քանի որ ուսումնասիրվող տարածքը գտնվում է Գյումրի քաղաքում, ուստի բերում ենք նրա համապատասխան կլիմայական ցուցանիշները: Ուսումնասիրվող տարածքին բնորոշ է տաք և չոր ամառը՝ հուլիսի միջին ամսական ջերմաստիճանը 19,5°C, միջին տարեկան հարաբերական խոնավությունը 72% (ժ.15-ին), լեռնահովտային քամիները 2-3 մ/վրկ արագությամբ և ցուրտ անհողմային ձմեռը՝ հունվարի միջին ամսական ջերմաստիճանը -9,0°C է, հարաբերական խոնավությունը 83% (ժ.15-ին), գերակշռող քամիների ուղղությունը հյուսիսային: Ձմռանը առկա են միջին արագություններից ամենաթույլ քամիներ 0,6մ/վրկ արագությամբ, իսկ ամռանը՝ 2 մ/վրկ:

Ստորև աղյուսակի տեսքով բերվում է մի քանի կլիմայական տվյալներ՝ ըստ Գյումրիի օդերևութաբանական կայանի դիտարկումների:

Օդի ջերմաստիճանը, °C

Բնակավայրի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի միջին ամսական, ըստ ամիսների °C												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII			
Գյումրի	1528	-9.0	-7.2	-1.2	6.7	11.7	15.5	19.5	19.5	15.2	8.5	1.7	-5.1	6.3	-36	38

Օդի հարաբերական խոնավությունը (%)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան	միջինը ժամը 15-ին	
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII		ամենացուրտ ամսվա	Ամենաշոգ ամսվա
Գյումրի	83	82	76	68	69	66	62	60	63	70	75	84	72	71	39

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական մմ օրական առավելագույնը												Չյան ծածկույթը			
	Àëï³ÙÇëŸ»ñÇ												տարեկան	տասնօրյա առավելագույնը, սմ	օրերի թիվը	ջրի առավելագույն քանակը ձյան մեջ, մմ
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII				
Գյումրի	<u>23</u> 17	<u>25</u> 26	<u>30</u> 24	<u>55</u> 30	<u>90</u> 53	<u>71</u> 55	<u>46</u> 40	<u>36</u> 47	<u>31</u> 64	<u>39</u> 39	<u>28</u> 25	<u>24</u> 32	<u>498</u> 64	61	94	129

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 142 սանտիմետր:

Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 24մ/վ է, 50 տարվա ընթացքում 27մ/վ:

Չյան նորմատիվային ճնշումը՝ 70կգ/մ² է:

Քամու արագության նորմատիվային ճնշումը՝ 45կգ/մ² է:

Հիդրոերկրաբանական տեսակետից շրջանում և տարածքում լայն տարածում ունեն պալեոգենի ապարների հետ կապված ստորերկրյա ջրերը, որոնք պատկանում են ճեղքային ջրերի տարատեսակներին: Ստորերկրյա ջրերի սնուցումը կատարվում է հալոցքային և մթնոլորտային տեղումների ջրերի ներծծման հաշվին:

Հետազննվող տարածքում հորատված հորատանքով բացահայտվել է գրունտային ջրերի տեղամասերը, որոնք գտնվում են 22 մետր հորիզոնի վրա:

Տիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթներ ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա՝ բացակայում են:

Շրջանի սեյսմիկ և սեյսմատեկտոնական պայմանները

1. Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ II -6.02.2006թ.-ի, տեղազննվող շրջանը գտնվում է III սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max} = 0.4g$ արագացմամբ, 9 ավելի բալլ սեյսմիկությամբ:
2. Սեյսմատեկտոնական տեսակետից շրջանը և տարածքը մտնում է Սևանա-Շիրակի սինկլինալի մեջ, որը բնութագրվում է տեկտոնական բազմազան ձևերի առկայությամբ, բարդացված խզումային և ծալքավոր «կառույցներով»:

2.2 Տարածքի երկրաբանալիթոլոգիական կառուցվածքը

Համաձայն կատարված ուսումնասիրությունների, հորատման և արխիվային նյութերի տվյալների՝ (նախկինում լաբորատոր ուսումնասիրման հիման վրա) ուսումնասիրվող տեղամասի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են՝

Հողաբուսական շերտ, լիցքային գրունտները, կավերը, տուֆերը :

Տեղամասը բաղկացած է հետևյալ գրունտերից վերնից-ներքև:
Երկրաբանալիթոլոգիական կտրվածքին մասնակցում հետևյալ 4 շերտերը:

- Շերտ-1 Հողաբուսական շերտ
 Շերտի հորատված հզորությունը 0.3 մետր է:
 Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՍ IV-5-82-ի (9a) I կարգ է:
- Շերտ-2 Լիցքեր՝ կազմված խճից, խճավազից, կավավազային լցենումով: Գրունտը թույլ խոնավ է: Շերտի հորատված հզորությունը 0.6-3.9 մետր է: Ժամանակակից տեխնածին առաջացումներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՍ IV-5-82-ի (246) III կարգ է:
- Շերտ-3(d-pQ4) Կավ բաց շագանակագույն, թույլ խոնավ և պինդ թանձրության: Շերտի հորատված հզորությունը 2.1-11.0 մետր է (Հա8): Դրանք ժամանակակից դեյուվիալ-պրոյուվիալ առաջացումներ են: Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՍ IV-5-82-ի (8d) III կարգ է:
- Շերտ-4 (βQ4) Տուֆ շագանակագույն, ցածր հորիզոններում մոխրագույն և սև գույնի: Շերտի հորատված հզորությունը 7.4-11.0 մետր է: Ժամանակակից չորրորդական հասակի ապարներ են: Գրունտը ըստ շահագործման դժվարության՝ համաձայն ՇՈՒՍ IV-5-82-ի (37) V կարգ է:

2.3 Գրունտների ֆիզիկամեխանիկական հատկությունների ընդհանրացված ցուցանիշները

Աղյուսակ 3.1

	Հատկանիշի անվանումը		Գրունտի անվանումը և շերտի համարը			
			1	2	3	4
1	Գրունտների անվանումները		Հողաբուսական շերտ	լիցքեր	Կավ, պինդ	Տուֆ
2	Խտությունը $q/սմ^3$	ρ	1,2	1,9	1,92	1,59
3	Միներալների մասնիկների խտությունը $q/սմ^3$	ρ	-	-	2,69	2,52
4	Նորմատիվային տեսակարար շաղկապվածությունը, $տ/մ^2$	C_n	-	-	7,26	3,23
5	Հաշվարկային տեսակարար շաղկապվածությունը, $տ/մ^2$	C_h	-	-	6,5	2,87
6	Ծակոտկենության գործակից	e	-	-	0,555	0,605
7	Նորմատիվային ներքին շփման անկյուն, աստ.	ϕ_n	-	-	$20^\circ 30'$	$35^\circ 10'$
9	Հաշվարկային ներքին շփման անկյուն	ϕ_h	-	-	18°	31°
10	Ձևախախտման մոդուլը, $տ/մ^3$	E	-	-	274	104
11	Բնական խոնավություն %	W	-	-	10,7	1,29
	Ամրության սահման $R_{սեղ.}$, կգ/սմ ²	Չոր վիճակ	-	-	-	97,7
		Ջր. վիճակ	-	-	-	85,3
	Փափկելիության գործակից	$K_{փ.}$	-	-	-	0,87
12	Գրունտի հաշվարկային դիմադրությունը կգ/սմ ²	R_o	-	-	5,0	-
13	Ներքնակի գործակից $տ/մ^3$	k_h	-	-	3000	3000
14	Գրունտի կարգը և մշակման պարագրաֆները ըստ CHè ĭ-IV-5-82	աղ. 1	I (9a)	III (246)	III (8д)	V (37)
15	Գրունտների կարգը ըստ սեյսմիկ հատկանիշերի ՀՀ ՇՆ II -2.06-06		III	III	III	II

2.4 Ինժեներա երկրաբանականներակազություն

Կատարված հետազոտությունների և դրանց արդյունքների վերլուծությունը բերել են հետևյալ եզրակացության.

Հետազոտվող տարածքը գտնվում է Շիրակի մարզ, Գյումրի համայնք Խորենացու փ. 50/5 հասցեում: Այն ներկայացնում է իրենից, որպես չկառուցապատված տարածք:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1580,0-1586,0 մետրերի սահմաններում:

- Տեղամասի երկրաբանական կտրվածքը հետազոտված խորությունների սահմաններում ներկայացված է գրունտների 4 տարբեր շերտերով, որոնց ֆիզիկամեխանիկական բնութագրերի ցուցանիշները բերված են 3.1-րդ աղյուսակում:

- Տեղամասում մինչև 30 մետր խորությամբ փորված հորատանցքով ստորերկրյա ջրեր բացահայտվել են 22 մետր խորության վրա:

- Ուսումնասիրվող տեղամասում նախագծվող շինություն կառուցելու համար, (ՈՒՇԱՂՈՒԹՅՈՒՆ) ապահովելով գրունտների միասեռությունը, որպես հիմնատակ առաջարկվում է շերտ 3-ը /կավային/ գրունտները՝ (տուֆերի վրայի շերտ), շերտ 4-ը /տուֆեր/ գրունտները, որոնց սեյսմիկ հատկությունները ըստ (ՀՀՇՆ II -6.02.2006թ.-ի տես աղ. 3.1 ում):

- **Գրունտների սեյսմիկ հատկությունների ճշգրտումը կատարել երկրաֆիզիկական հետազոտությունների հիման վրա:**

- Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի ուսումնասիրվող տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, արագացման առավելագույն մեծությունը՝ $A_{max}=0,4g$ և ունի 9 ու ավելի բալ սեյսմիկայնություն:

- Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի, ուսումնասիրվող տարածքում կազմում է 142 սանտիմետր:

- Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն՝ բացակայում են:

- Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

- Ուսումնասիրվող տեղամասում կառույցների հիմքերի փոստրակները բացելուց և նախագծային նիշերին հասնելուց հետո՝ ինժեներ-երկրաբանի կողմից հիմնափոսի զննումը և համապատասխան եզրակացությունը պարտադիր է:

2.5 Օդային ավազան

Գյումրի քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն” ՊՈԱԿ (Էկոմոնիտորինգ) կողմից:


Քաղաքի անշարժ դիտակայանում մթնոլորտում փոշու պարունակության որոշման համար վերցվել է օդի 301 փորձանմուշ: Փոշու միջին տարեկան կոնցենտրացիան չի գերազանցել ՍԹԿ-ն:


2019թ. քաղաքի մթնոլորտի աղտոտվածությունը (ըստ մթնոլորտն աղտոտող 3 նյութերի) միջինից ցածր մակարդակի է, մթնոլորտի աղտոտվածության ցուցանիշը 1.66 է (փոշի՝ 0.56, ծծմբի երկօքսիդ՝ 0.73, ազոտի երկօքսիդ՝ 0.37):

Վերջին 5 տարիների ընթացքում դիտվել է փոշու կոնցենտրացիայի նվազման տենդենց (աղյուսակ 3.2.1):

Քաղաքի 24 շարժական դիտակետերի պասիվ նմուշառիչներով մթնոլորտում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի պարունակությունները որոշելու համար ընդհանուր առմամբ վերցվել է օդի 2165 փորձանմուշ: Որոշված նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում որոշված նյութերի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Աղյուսակ 3.2.1 Գյումրի քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու աղտոտվածության միջին մակարդակի (մգ/մ³) փոփոխությունները 2015-2019թթ.

Միացություն	Բնութագրիչ	Տարեթիվ					Տենդենց
		2015	2016	2017	2018	2019	
Փոշի	Միջին տարեկան կոնցենտրացիա	0,280	0,175	0,326	0,090	0,084	-0,048
	Փորձանմուշների քանակ	281	355	355	295	301	





Սույն հայտում նախատեսված միջոցառումների արդյունքում՝ օդային ավազանի աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի սպասվում:

2.6 Հիդրոլոգիա

Ռելիեֆի, կլիմայի և ջրաերկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունների շնորհիվ Շիրակի մարզի տարածքն աչքի է ընկնում համեմատաբար թույլ զարգացած ջրագրական ցանցով: Մարզի գետային ցանցը գրեթե ամբողջությամբ պատկանում է Արաքս գետի ավազանին: Տարածքում կազմավորվում և սկիզբ է առնում Ախուրյան գետը՝ Կարախան, Գյումրի, Կարկաչուն, Աշոցք վտակներով: Արագածի լանջերի բազմաթիվ աղբյուրներից սկզբնավորվում և Ախուրյանի վտակներին են միախառնվում Մանթաշ, Գեղաձոր և այլ գետակներ: Ախուրյան գետը համարվում է Շիրակի մարզի ջրային հիմնական զարկերակը: Այն Արաքսի ձախակողմյան վտակն է և սկիզբ է առնում Արփի լճից:

Մոտ 70 կմ երկարությամբ, գետն ամբողջովին հոսում է մարզի տարածքով, որից հետո միջին և ստորին հոսանքներում սահմանային գետ է դառնում Թուրքիայի և Հայաստանի միջև:

Ախուրյանի տարածքում, կախված տուֆերի նկատմամբ ունեցած իրենց դիրքից, կա գրունտային ջրերի երկու հորիզոն՝ վերտուֆային և ստորտուֆային: Վերտուֆային ջրատար հորիզոնը կապված է վերին չորրորդականի շերտախմբի կտրվածքում ավազային, մանրախճային և խճային շերտերի ու ոսպնյակների հետ: Այդ հորիզոնի համար որպես ջրամերժ հորիզոն հանդիսանում են տուֆերը:

Վերտուֆային ջրատար հորիզոնի հզորությունը 2.5-5.0մ է:


Մակերևութային և մթնոլորտային ջրերի մեծ մասը թափանցում է տուֆերի տակ տեղադրված տարահատիկ ավազների, մասամբ խճի և կավավազների մեջ, առաջացնելով ստորտուֆային ջրատար հորիզոնը, որի համար որպես ջրամերժ շերտ են հանդիսանում լճային կավերը: Այս հորիզոնն ավելի ջրառատ է, ունի մինչև 15 մ հզորություն:

Գրունտային ջրերը սնվում են Շիրակի գոգավորությունը շրջապատող լեռնաշղթաներից, գետերի ստորհունային ջրերից, ժամանակավոր ջրահոսքերից, մթնոլորտային տեղումներից և ռոռզման ցանցի ֆիլտրացիոն կորուստներից: Նրանց սնման հիմնական աղբյուրը շրջապատող լեռնաշղթաների հյուսիս-արևելյան և արևելյան մասերն են: Մթնոլորտային տեղումներից նրանց ամենապինդն սնումը ներծծման միջոցով սկսվում է մարտի երկրորդ կեսից: Գրունտային ջրերի սնման գործում մեծ դեր են խաղում արհեստական ուղիները: Գետերից ռոռզման նպատակով վերցված ջրերի մոտ 28%-ը թափանցում է գրունտային ջրերի մեջ: Ջրերի քիմիական կազմը հիդրոկարբոնատա-կալցիումա-նատրիումային է, հազվադեպ՝ սուլֆատա-հիդրոկարբոնատա-մագնիումա-կալցիումային:

2.7 Սեյսմատեկտոնիկ և սողանքային պայմաններ

Տարածաշրջանի ամբողջ տարածքը սեյսմատեկտոնական տեսանկյունից (համեմատած հանրապետության տարածքի հետ) գտնվում է բարձր սեյսմիկ ռիսկի գոտում: Շիրակի մարզի հյուսիսը մտնում է 8-9, իսկ կենտրոնն ու հարավը՝ 9 բալ և ավելի ուժգնություն ունեցող սեյսմիկ գոտիներում:

Նրա տարածքում և շրջակայքում երկրաշարժային հայտնի էպիկենտրոններ են հանդիսանում Գյումրին, Սպիտակը, Անին, Կարսը, Ախալքալաքը: Գյումրի քաղաքը գտնվում է 8-9 բալանոց սեյսմիկ գոտում: Վերջին ուժեղ երկրաշարժը տեղի է ունեցել 1988թ. դեկտեմբերի 7-ին: Ստորև Նկար 3-ում ներկայացված է սեյսմիկ և սելավային ռիսկերի գոտիներում նախատեսվող գործունեության վայրի տեղադիրքը:



Նկար 3. Նախատեսվող գործունեության վայրի սեյսմիկ և սելավային ռիսկերը

2.8 Հողերի նկարագիրը

Շիրակի մարզում առանձնացվում են հողերի տարածման հետևյալ հիմնական գոտիները՝ Լեռնաշագանակագույն հողեր - տարածվում են մարզի հարավում, նախալեռնային գոտու չոր տափաստաններում, Արագածի ցածրադիր լանջերից մինչև Ախուրյան գետի հովիտը՝ 1450-1600 մ բարձրությունների սահմաններում: Ձևավորվում են շոգ և համեմատաբար չոր կլիմայական պայմաններում: Հումուսի պարունակությունը կազմում է 3-4%:

Լեռնատափաստանային սևահողեր - սրանք տարածվում են մարզի 1500-2200 մ, երբեմն մինչև 2400-2500 մ բարձրությունները, ընդգրկում են Շիրակի և Աշոցքի սարահարթերի մեծ մասը և դրանք եզերող նախալեռնային և միջին բարձրության գոտիները: Հողի վերին շերտը հումուսացված է, հումուսի պարունակությունը հասնում է 4-5%-ից մինչև 10-11%, իսկ սևահողերի միջին հզորությունը՝ 50-65 սմ:


Լեռնային, մարգագետնատափաստանային հողեր - տարածվում են սևահողերից վեր 2200-ից մինչև 2600-2700 մ բարձրություններում: Հումուսի պարունակությունը կազմում է 8-12%:

Լեռնային մարգագետնային հողեր - տարածված են մարգագետնատափաստանային հողերից վեր:

Հողաշերտի հզորությունը փոքր է. վերին մասերում այն հազիվ հասնում է 15-20 սմ-ի:

Լեռնամարգագետնային հողերը ծածկված են բարձրորակ արոտներով:

Ստորև **Նկար 4**-ում ներկայացված է նախատեսվող գործունեության վայրի հողերի կատեգորիան



Նկար 4. Նախատեսվող գործունեության վայրի հողերի կատեգորիան

2.9 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի բուսական աշխարհը

Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում են ՀՀ Շիրակի ֆլորիստիկական շրջանում: Շիրակի մարզում բուսական աշխարհը խիստ բազմազան է, որին նպաստել են բարձրությունների մեծ տարբերությունները, լեռնալանջերի տարբեր կողմնադրությունները և մակերևույթի թեքությունները:

Շիրակի մարզում կան շուրջ 40 հազվագյուտ և անհետացող բուսատեսակներ, որոնք գրանց ված են Հայաստանի Կարմիր գրքում: Տարածքի բուսականությունը պատկանում է հիմնականում տափաստանային տիպին, գետահովիտներում աճում են սկազիա, թխկենի, հացենի և այլ ծառատեսակներ: Գերակշռում են լեռնատափաստանային սևահողերը՝ տարախոտա-հացազգի խոտաբույսերի տարածմամբ: Տարածաշրջանում առկա են հացահատիկային զանազան խոտաբույսերի ֆորմացիաներ:

Լեռնային տափաստանները ներկայացված են երեք՝ փետրախոտային (Stipa), շյուղախոտային (Festuca) և ցորնուկային (Bromus) տափաստանների ֆորմացիաներով:

Ոչ անտառածածկ հողերը նախկինում ծածկված են եղել անտառներով, որի վկայությունն է թփային մացառների առկայությունը:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող բուսատեսակների ցանկը ներկայացված է ստորև Աղյուսակ 6-ում: Դրանցից որոշների լուսանկարները բերված են Նկար 7-ում:

Աղյուսակ 6. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող բուսատեսակները

№	Բուսատեսակներ	
	Հայերեն	Լատիներեն
16	Ալուչա	Prunus
17	Փշատենի	Elaeagnus
18	Ուռենի	Salix
19	Մաարենի	Rosa canina

№	Բուսատեսակներ	
	Հայերեն	Լատիներեն
1	Բարդի	Populus
2	Ակացիա	Robinia
3	Թխկի	Acer
4	Թթենի	Morus
5	Վայրի ծիրանենրի	Armeniaca
6	Սզնի	Crataegus
7	Ուռատերև տանձենի	Pyrus salicifolia
8	Սովորական հացենի	Fraxinus excelsior
9	Աղեղնաեզր ասպիրակ	Spiraea crenata
10	Արևելյան ծորենի	Berberis orientalis
11	Սովորական չլենի	Cotoneaster integerrima
12	Վրացական ցախակեռաս	Lonicera iberica
13	Սովորական լեռնաչամիչ	Ephedra procera
14	Թփային հասմիկ	Jasminum fruticans
15	Թեղի	Ulmus



Արևելյան ծորենի - *Berberis orientalis*



Փշատենի - *Elaeagnus*



Թփային հասմիկ - *Jasminum fruticans*



Վրացական ցախակեռաս - *Lonicera iberica*



Թթենի - *Morus*



Բարդի - *Populus*



Ուռստերն տանձենի - *Pyrus salicifolia*



Մասրենի - *Rosa canina*

Նկար 7. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող բուսատեսակների լուսանկարները

Ինչպես նշվեց, նախատեսվող գործունեության վայրը գտնվել և շարունակվում է գտնվել բազմամյա մարդածին ազդեցության ներքո, ուստի կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ չկան:

2.10 Նախատեսվող գործունեության տարածաշրջանի կենդանական աշխարհը

Աշխարհագրական դիրքի առումով Շիրակի մարզն ընկած է Կովկասյան և Փոքրասիական կենդանաաշխարհագրական մարզերի միջև: Կենդանական աշխարհի բազմազանությունն կապված է բուսականության բազմազանությամբ: Նկարագրվող տարածքում կենդանական աշխարհը ներկայացված է տափաստանային, բարձր լեռնային լայն տարածված կենդանական ձևերով: Այն ներկայացված է ընտանի կենդանիների, թռչունների վերարտադրությամբ: Երկկենցաղներից և սողուններից այստեղ հանդիպում են դողոշների, գորտերի, մողեսների և օձերի բազմաթիվ տեսակներ:

Լայնորեն տարածված կենդանատեսակներից այստեղ հանդիպում են կաթնասուններից՝ նապաստակ (*Lepus europaeus*), աղվես (*Vulpes vulpes*), գայլ (*Canis lupus*) և մի շարք կրծողներ:

Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակների ցուցակը բերված է ստորև Աղյուսակ 7-ում, իսկ դրանց որոշների լուսանկարները՝ Նկար 8-ում:

Աղյուսակ 7. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակները

№	Կենդանատեսակ	
	Հայերեն	Լատիներեն
1	Մողես	<i>Lacerta armeniaca</i>
2	Դալի մողես	<i>L. dahli</i>
3	Վալենտինի մողես	<i>Darevskia valentini</i>
4	Նախյան մողես	<i>L. nairensis</i>
5	Հայկական իծ	<i>Vipera raddei</i>
6	Տափաստանային իծ	<i>V. erivanensis</i>
7	Խայտաբղետ իժանման սահնօձ	<i>Coluber ravergieri</i>
8	Նապաստակ	<i>Lepus europaeus</i>
9	Աղվես	<i>Vulpes vulpes</i>
10	Գայլ	<i>Canis lupus</i>
11	Դաշտամուկ	<i>Microtus arvalis</i>
12	Կանաչ դողոշ	<i>Pseudepidalea viridis</i>



Վալենտինի մողես - *Darevskia valentini*



Մողես - *Lacerta armeniaca*



Նապաստակ - *Lepus europaeus*



Դաշտամուկ - *Microtus arvalis*



Կանաչ դողող - *Pseudepidalea viridis*



Հայկական իծ - *Vipera raddei*

Նկար 8. Նախատեսվող գործունեության տարածաշրջանում հանդիպող կենդանատեսակներից որոշների լուսանկարները

Ինչպես նշվեց, նախատեսվող գործունեության վայրը գտնվել և շարունակվում է գտնվել բազմամյա մարդածին ազդեցության ներքո, ուստի կարելի է փաստել, որ նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ կարմիր գրքում գրանցված կենսադանատեսակներ չկան:

2.11 Պատմամշակութային և բնության հուշարձանները

ՀՀ Կառավարության 2004թ. սեպտեմբերի 9-ին թիվ 1270-Ն որոշմամբ հաստատված՝ Շիրակի մարզի հուշարձանների պետական ցուցակի համաձայն, Գյումրու տարածքում կան թվով 27 միավոր պատմամշակութային հուշարձաններ, որոնք ներկայացված են ստորև Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Գյուրու պատմամշակութային հուշարձանները

Հուշարձանի անվանումը	Կառուցման տարեթիվը	Հասցեն	Նշանակությունը՝ հանրապետական/ տեղական
Ամրոց "Ալեքսանդրապոլ" ("Մեծ")	1835-1845 թթ.	Հարավ-արևմտյան մասում	Հ
Ամրոց "Սև բերդ" ("Հարավային")	19 դ.		Հ
Ամրոց "Կարմիր բերդ" ("Հյուսիսային", "Փոքր")	19 դ.		Հ
Արգելոց "Կումայրի"	Ք.ա. 3 հզ - Ք.հ. 21 դ.	քաղաքի մեջ	Հ
Բնակատեղի "Կումայրի"	Ք.ա. 2-1 հազ.	"Կումայրի" տուրիստական հանգրվանի բակում	Հ

Բնակատեղի "Սև Բերդ"	Ք.ա. 3-1 հազ.	"Սև բերդ" ամրոցի մոտ	Հ
Գերեզմանոց	19-20 դդ.	քաղաքի հվ մասում	Հ
Տեքստիլ գործարանի համալիր	1920-30-40-ական թթ.	Նժդեհի փող.	Հ
Դամբարանադաշտ	Ք.ա. 3 հազ.	"Կարմիր բերդ" վայրում	Հ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ. անտիկ	"Վարդաթաղ" վայրում	Հ
Եկեղեցի	7 դ.	"Կումայրի" տուրիստական հանգրվանի բակում	Հ
Երկաթգծի համալիր	1897-1902 թթ.	աե մասում	Հ
Երկաթգծի հանգուցային հիվանդանոցի շենք	1926 թ.	Սկյան փող. 71	Տ
Զբոսայգի Շահումյանի անվան	1880-ական թթ.	Զիվանու փող.	Հ
Զորակայան "Կաբարդինսկի"	19 դ.	Կարմիր բանակի խճուղի	Հ
Զորակայան "Կազաչի Պոստ"	19 դ.- 20 դ. սկիզբ	"Կազաչի պոստ" վայրում	Հ
Զորակայան "Սիվիբրսկի"	19 դ.	Ղարսի խճուղի	Հ
Զորակայան "Պոլիգոն"	19 դ.	Շիրակացու փող.	Հ
Հուշարձան Ավ. Բասակյանին	2003 թ.	Ավ. Բասակյանի անվան դպրոցի բակում	Տ
Հուշարձան "Մայր Հայաստան"	1975 թ.	քաղաքի հվ մասում	Հ
Շենք N 2 հիվանդանոցի	1930-ական թթ.	Մազմանյան փող. 3	Հ
Շենք Սկյանի անվան մշակույթի պալատի	1930-ական թթ.	կայարանամերձ հրապարակում	Հ
Որմնանկարներ	1970-ական թթ. սկիզբ	Աստղի հրապարակ, էլեկտրատեխնիկական գործարանի ճաշարանի շենքում	Հ
Որմնանկարներ	1970-ական թթ. սկիզբ	"Ստրոյմաշինա" գործարանի ճաշարանի շենքում	Հ
Որմնանկար	1970-ական թթ. սկիզբ	Աճեմյանի անվան թատրոնի ճեմասրահում	Հ
Որմնանկար	1970-ական թթ. սկիզբ	Ռեզիստորների "Օմեգա" գործարանի մասնաշենքում	Հ
Գուլպայի ֆաբրիկայի համալիր	1950-ական թթ.	Անկախության հրապարակ	Հ

ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ին թիվ 967-Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ բնության հուշարձանների ցանկի համաձայն, նախատեսվող գործունեության տարածքում բնության հուշարձաններ չկան:

Մոտակա բնության հուշարձաններն են՝

- Ամրոց «Սև Բերդ»՝ 4.5 կմ
- Արգելոց «Կումայրի»՝ 3.7 կմ

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Բոլոր տիպի թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել «Կառավարությանը ենթակա Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- տարածքի հոսքերը կմիավորվեն մեկ բակային ցանցում և կմիացվեն սելավային ջրացանցին:
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինաղբ:
- Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ավտոցիստեռներով, պայմանագրային հիմունքներով:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
